

II. 2005 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
«2005 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված, հաշվառված թվով 422 անուն, սակայն աշխատանքների քանակով 437 միավոր ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1828 միավոր աշխատանք) վիճակագրական աշխատանքներից 420-ը, կամ 435 միավորը (պարբերականությունը հաշվի առած՝ 1826 միավոր աշխատանք, կամ 99.8%) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Չկատարված 2 աշխատանքները տարեկան պարբերականությամբ են:

«Տնտեսության հիմնական միջոցների արժեքը (հաշվեկշռային և մնացորդային) ըստ տնտեսության ճյուղերի» (ծածկագիր՝ 113001) և «ՀՀ ազգային հարստությունը» (ծածկագիր՝ 113002) աշխատանքներն իրականացվել են մասնակիորեն, պայմանավորված հանրապետության բնակչոնդի միասնական շուկայական գներով վերագնահատված հնարավորինս համընդգրկուն և ամբողջական տեղեկատվության բացակայության հանգամանքով, ինչպես նաև հանրապետության տարածքում (թե գործող, թե չգործող կազմակերպություններում) հիմնական միջոցների համատարած հաշվեգրման (հաշվառման) իրականացման անհրաժեշտությամբ: Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 03.08.2005թ. N 10-Ն որոշման համաձայն, 142011 ծածկագրով աշխատանքը հանվել է «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» «1.4. Աշխատանքի շուկա» ենթահատվածի «1.4.2. Բնակչության կենսամակարդակ և աշխատավարձ» բաժնից:

Վիճակագրական աշխատանքներն (ցուցանիշները) իրականացվում (հաշվարկվում) են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հիմնած և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական չափորոշիչներ (ստանդարտներ) սահմանող «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» (SSԸՀ) և «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին» (SSՀՄ) համապատասխան:

Թվարկվածներից SSԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին, իսկ 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց SSՀՄ-ին (տես՝ ԱՄՀ <http://docs.armstat.am/nsdp> ինտերնետային էջը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՀՀ ԱՎԾ 2005թ. կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածներին, ինչպես նաև «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությանը) համապատասխան:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 22 աշխատանքների (111001-111004, 111006-111008, 112001-112011, 112014, 113001-113003 ծածկագրեր) մասով հաշվարկվել են.

1.ամսական կտրվածքով՝

- ✓ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը օպերատիվ և նախնական տվյալներով,
- ✓ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը մեկ շնչի հաշվով օպերատիվ և նախնական տվյալներով,

2.եռամսյակային կտրվածքով՝

- ✓ նախնական և նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված համախառն ներքին արդյունքի ցուցանիշը.
 - արտադրական եղանակով՝ տնտեսության ճյուղերով (արտադրանքի թողարկում, միջանկյալ սպառում, ավելացված արժեք),
 - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,

3.տարեկան կտրվածքով.

ընդհանուր տնտեսության մակարդակով հաշվարկվել են.

- ✓ եռամսյակային համախառն ներքին արդյունքի հաշվարկն (2003թ. եռամսյակները՝ ճշգրտված 2003թ. վերջնական հաշվետու տարեկան տվյալների հիման վրա և 2004թ. եռամսյակները՝ վերանայված 2003թ. հաշվետու տարեկան տվյալների հիման վրա).
 - արտադրական եղանակով՝ տնտեսության ճյուղերով,
 - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,
- ✓ 2004թ. համախառն ներքին արդյունքի հաշվարկն ընթացիկ և նախորդ տարվա գներով՝ վերջնական հաշվետու տվյալներով.
 - արտադրական եղանակով,
 - ծախսային եղանակով,
 - եկամուտների գոյացման եղանակով
- ✓ Համախառն ներքին արդյունքի հաշվարկը բազիսային տարվա մշտական, միջին տարեկան գներով.
 - 2003թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
 - 2004թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
- ✓ Համախառն ներքին արդյունքի հաշվարկը բազիսային տարվա մշտական, միջին տարեկան գներով՝ սեզոնային ճշգրտումներով.
 - 2003թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
 - 2004թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
- ✓ Արտադրության հաշվի հաշվարկ՝ ագրեգացված և ըստ հատվածների,

¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

- ✓ Եկամուտների ձևավորման հաշվի հաշվարկ՝ ագրեգացված և ըստ հատվածների,
- ✓ Սկզբնական եկամուտների բաշխման հաշվի հաշվարկ՝ ագրեգացված,
- ✓ Եկամուտների բաշխման հաշվի հաշվարկ՝ ըստ հատվածների,
- ✓ Եկամուտների օգտագործման հաշվի հաշվարկ՝ ագրեգացված,
- ✓ Տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի հաշվարկ՝ ըստ հատվածների,
- ✓ Եկամուտների երկրորդային բաշխման հաշվի հաշվարկ՝ ագրեգացված,
- ✓ Բնափրեղեն ձևով եկամուտների վերաբաշխման հաշվի հաշվարկ՝ ըստ հատվածների
- ✓ Ճշգրտված տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի հաշվարկ՝ ըստ հատվածների,
- ✓ Կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվարկ՝ ագրեգացված,
- ✓ Կապիտալի ծախսերի հաշվի հաշվարկ՝ ըստ հատվածների»
- ✓ 2003թ. ավելացված արժեքի հաշվարկները Ազգային հաշիվների համակարգ (ԱՀՀ) 93-ի ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ենթահատվածների կտրվածքով,
- ✓ Բնակչության տնային գույքի կուտակման 2004թ. հաշվարկը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ «Տնտեսության հիմնական միջոցների արժեքը (հաշվեկշռային և մնացորդային) ըստ տնտեսության ճյուղերի» (ծածկագիր՝ 113001) և «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը» (ծածկագիր՝ 113002) աշխատանքներն իրականացվել են մասնակիորեն, պայմանավորված հանրապետության բնակֆոնդի միասնական շուկայական գներով վերագնահատված հնարավորինս համընդգրկուն և ամբողջական տեղեկատվության բացակայության հանգամանքով, ինչպես նաև հանրապետության տարածքում (թե գործող, թե չգործող կազմակերպություններում) հիմնական միջոցների համատարած հաշվեգրման (հաշվառման) իրականացման անհրաժեշտությամբ:

1.2. Արտադրություն (ծառայություններ)²

1.2.1. Արդյունաբերություն²

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 19 աշխատանքները (121001-121019 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 10 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 8-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են 2005թ. մոնիտորինգում ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերածածկագրման աշխատանքները:

² Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առաձգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) իրականացվել է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Եվրամիության երկրներում կիրառվող, ըստ գործունեության տեսակների, արտադրանքի վիճակագրական դասակարգման (CPA) ներդրման հետ կապված, 2005թ. սկսվել են աշխատանքներն արտադրատեսակների վերաձևակարգման (անվանումները նոր դասակարգչին համապատասխանեցման) ուղղությամբ:

Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀՄ) Հայաստանի Հանրապետության անդամակցության նախապայմանների ապահովման նկատառումներով պայմանավորված, ԱՄՀ ՏՏՀՄ –ի համար արդյունաբերության վիճակագրության մի շարք ցուցանիշների վերաբերյալ, ներկայացվել է տեղեկատվություն:

Հրապարակվել է արդյունաբերության ոլորտի 5 վիճակագրական տեղեկագիր, որից 2 ամսական, 2 եռամսյակային և 1 կիսամյակային պարբերականությամբ:

Ամսական պարբերականությամբ՝

1.«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման» (տեղեկագրի ծածկագիրը 1210-201).

2.«Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» (տեղեկագրի ծածկագիրը 1210-202).

եռամսյակային պարբերականությամբ՝

1. «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, մարզերով» (տեղեկագրի ծածկագիրը 1210-203).

2.«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման » (տեղեկագրի ծածկագիրը 1210-205).

կիսամյակային պարբերականությամբ՝

1. «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման» (տեղեկագրի ծածկագիրը 1210-204):

1.2.2. Գյուղատնտեսություն³

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 44 աշխատանքները (122001-122044 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 28 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 10 տեղեկանքներով: Ընդ որում, 28 պետական վիճակագրական հաշվետվություններից 6-ը ամսական պարբերականությամբ են, 4-ը՝ եռամսյակային և 18-ը՝ տարեկան: Հաշվետվություններից 10-ը բուսաբուծության գծով են, 11-ը՝ անասնապահության, իսկ 7-ը գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի են:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի վիճակագիրների կողմից անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն, որի արդյունքները գետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում են ստացել թվով 2 հաշվետվական ձևեր՝ ՁԵՎ ԹԻՎ 24-ԳՏ (տարեկան) և ՁԵՎ ԹԻՎ 6-ԳՏ (տարեկան) ու դրանց լրացման հրահանգներ:

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն³

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի 1 ծածկագրով ամսական պարբերականությամբ աշխատանքը (123001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում:

Ձկնորսության ու ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են մեկ պետական վիճակագրական հաշվետվության ձևով, որի արդյունքները յուրաքանչյուր ամիս գետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

1.2.4. Շինարարություն³

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 13 աշխատանքները (124001-124013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շինարարության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են թվով 9 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 4-ը՝ ամսական, 5-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Փոփոխություններ է կատարվել 1 պետական վիճակագրական հաշվետվության ձևում և դրա լրացման մեթոդական ցուցումներում:

³Տես՝ Ծրագիր, Հավելված I:

2005 թ. ընթացքում իրականացվել է անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկում, պարբերաբար անցկացվող շրջագայությունների միջոցով ձևավորվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը (համացանկը):

1.2.5. Տրանսպորտ⁴

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 20 աշխատանքները (125001 - 125020 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 21 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 6-ը՝ ամսական, 7-ը՝ եռամսյակային, 10-ը տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի՝ 5, օդային տրանսպորտի՝ 7, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 1 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով: 125006 ծածկագրով «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» վիճակագրական աշխատանքը կատարվել է ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

«ՏԱՍԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-8» նախագծի շրջանակում պատրաստվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների հետազոտության» իրականացման համար անհրաժեշտ հարցաթերթը:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ տրանսպորտի տեսակների, ինչպես նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

1.2.6. Կապ⁴

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 11 աշխատանքները (126001-126011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Կապի համակարգի գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 1 եռամսյակային և 9 տարեկան պարբերականությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են կապի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ կապի տեսակների, ինչպես նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Միջազգային մեթոդաբանությամբ սահմանված չափանիշներով ըստ «Տնտեսական գործունեության տեսակների (NACE)» և «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (CPA)» Հայաստանի դասակարգիչների ներդրմամբ պայմանավորված, վերանայվել է կապի գծով թվով 6 պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգները: Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2005թ. հոկտեմբերի 28-ի նիստում համապատասխան որոշումներով հաստատվելուց հետո հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարությունում:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և կապի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

***1.2.7. Մանրաձախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)*⁵**

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (127001-127012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (7 ամսական, 1 եռամսյակային, 4 տարեկան):

Սպառողական շուկայի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 12 պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերով (որոնցից 9-ը՝ մանրաձախ առևտրի (5-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 3-ը՝ տարեկան պարբերականությամբ), 2-ը՝ ծառայությունների (ամսական պարբերականությամբ) և 1-ը՝ մանրաձախ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ):

Հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա առևտրի շրջանառության ծավալի: Ընտրանքային դիտարկման նյութերն օգտագործվել են տեղեկատվական ամսական զեկույցներում:

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) ներդրմամբ պայմանավորված փոփոխության են ենթարկվել «Առևտրի շրջանառության մասին» Ձև N 1-առևտուր (ամսական) և «Ծառայությունների ծավալի մասին» Ձև N 1-ծառայություններ (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման կարգի վերաբերյալ հրահանգները, ինչպես նաև իրականացվել են աշխատանքներ առևտրի և ծառայությունների ոլորտի գործունեության տեսակների վերաձածկագրման համար:

⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

1.2.8. Կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը⁶

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 6 աշխատանքները (128001-128006 ծածկագրեր, 2-ը եռամսյակային և 4-ը տարեկան պարբերականությամբ) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2005 թվականին տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային մեթոդով վիճակագրական մոնիտորինգում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, հետազոտվող կազմակերպությունները խմբավորվել են՝ խոշոր ու միջին կազմակերպությունների և փոքր ու գերփոքր կազմակերպությունների: Ընդ որում, խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի կատարվել է ընտրանք: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա:

Կատարվել են պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման, տվյալների տարածման և ամփոփ ելքային աղյուսակների ստացման համար ծրագրի տեխնիկական առաջադրանքի լրացումներ:

1.3. Գներ և սակագներ⁶

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 58 աշխատանքները (131001-131031, 132001-132008, 133001-133006, 134001-134005, 135001-135002, 137001-137006 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

- ✓ սպառողական գների ինդեքս (ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 400 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներով,
- ✓ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս (ըստ հանրապետության և հետազոտվող 11 արդյունաբերական ճյուղերի),
- ✓ գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման 3 ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- ✓ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),
- ✓ բեռնառաքումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթգիծ, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),

⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

✓ արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել են եռամսյակային կտրվածքով, 3 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և այլ երկրների:

✓ 95 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետազոտվող 11 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է սղաճի հաշվարկ հանրապետությունում): 2005թ. սեպտեմբերից դիտարկվող 87 անվանում ապրանք-ծառայությունների փոխարեն հաշվարկները կատարվում են 95 ապրանք-ծառայություններով:

2005թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար աշխատանքներ են իրականացվել սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, կատարվում է սպառողական զամբյուղի վերահաշվարկ, դիտարկվող ապրանք-ծառայությունների ցանկի վերանայում, միջազգային դասակարգչին համապատասխանեցում:

Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 140000 գնային տեղեկատվություն:

Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի անդամակցության կապակցությամբ մշակվել և վերանայվել է սպառողական գների և արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունը՝ ինտերնետային կայքում այն տեղադրելով 3 լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և ներդրման նպատակով վերանայվել և ճշգրտվել է հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ու ուսումնասիրվող արտադրատեսակների ցանկը (կրկնակի ընդլայնվել է հետազոտվող դաշտը), վերանայվել է 1-Գ-ին (տարեկան) հաշվետվական ձևը, մշակված տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմվում են գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական խնդիրները:

Արտաքին առևտրի ինդեքսների նախնական մշակումների ընթացքում ներմուծվող (արտահանվող) ապրանքատեսակների զգալի քանակով բացակայության, գնային մեծ տարբերությունների (որոնք առաջ են բերում գների ինդեքսների կտրուկ տատանումներ) հետ կապված մեթոդաբանական խնդիրները լուծելու նպատակով, կատարվել է ներմուծման (արտահանման) միջին գների ստուգաճշտում և դրանց միջոցով սահմանային գործակիցների հաշվարկ:

ՀՀ բոլոր տարածաշրջանների 200 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7600 գյուղացիական տնտեսություններում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 ապրանքատեսակ)), և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ): Միաժամանակ, գյուղատնտեսությամբ զբաղվող թվով 100 առևտրային

կազմակերպություններից հավաքագրվել է գյուղմթերքների իրացման ծավալների և գների մասին տեղեկատվություն սկսած 2004թ. հուլիսից:

Ազգային հաշիվներում, որպես դեֆյաստորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ) և տարեկան կտրվածքներով:

Յուրաքանչյուր ամիս համառոտ վերլուծականով (տեղեկանքի և ամփոփ աղյուսակների տեսքով) ՀՀ ղեկավար մարմիններին է ներկայացվել սպառողական գների փոփոխությունների (սղաճի) մասին օպերատիվ տեղեկատվություն, ինչի մասին միաժամանակ, զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) միջոցով տեղեկացվել է նաև հանրությունը: Պատրաստվել են հաղորդագրություններ (յուրաքանչյուր ամիս) 6 զանգվածային լրատվական գործակալությունների համար: Կայացել են հանդիպումներ և հարցազրույցներ ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ ՀՀ-ում սղաճի և ՄԳԻ-ի մեթոդաբանական հարցերի շուրջ:

Համաձայն ՀՀ ԱՎԾ, Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) միջպետական վիճակագրական կոմիտեի, Ռուսաստանի Դաշնության վիճակագրության դաշնային ծառայության միջև ԱՊՀ տարածաշրջանում ՀՆԱ-ի և ազգային արտարժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին փոխըմբռնման հուշագրի՝ 2004-2005թթ. տվյալների հիման վրա կատարվել է մեծածավալ աշխատանք: Այդ ծրագրի շրջանակներում ամփոփվել են 2004 թվականին դիտարկված շուրջ 1400 անվանում սպառողական ապրանք-ծառայությունների գնային տեղեկատվությունն ըստ դիտարկվող բնակավայրերի, ինչպես նաև ներդրումային ապրանքների, շինարարական բաղադրամասերի, ոչ շուկայական ծառայությունների գնային ու քանակական տվյալները և ամփոփ գնային տեղեկատվությունը ներկայացվել է ԱՊՀ տարածաշրջանի համակարգողներին: Միաժամանակ շարունակվել են 2005 թվականի համար սպառողական ապրանք-ծառայությունների գների ամսական կտրվածքով դիտարկման աշխատանքները:

1.4. Աշխատանքի շուկա⁷

1.4.1. Զբաղվածություն և գործազրկություն⁷

Զբաղվածության և գործազրկության ոլորտի վերաբերյալ Ծրագրով նախատեսված վիճակագրական 7 աշխատանքները (141001-141007 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

141001-141007 ծածկագրերի աշխատանքները նպատակ ունեն բնութագրելու ՀՀ աշխատանքի շուկայում ընթացող գործընթացները (ՀՀ մարզերով և ըստ տնտեսության ճյուղերի ու հատվածների)՝ բնակչության զբաղվածության, աշխատանքի տեղավորման, աշխատուժի շարժի տեսանկյունից: Ընդգրկված են 1 ամսական (ամփոփ), 2 եռամսյակային (ամփոփ և սկզբնական) և 4 տարեկան (ամփոփ և սկզբնական) աշխատանքներ:

⁷ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

1.4.2. Բնակչության կենսամակարդակի եվ աշխատավարձ⁸

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 վիճակագրական աշխատանքներից 11-ը (142001-142010, 142012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Սեկ աշխատանք (ծածկագիր՝ 142011) Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 03.08.2005թ. N 10-Ն որոշման համաձայն հանվել է «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» «1.4. Աշխատանքի շուկա» ենթահատվածի «1.4.2. Բնակչության կենսամակարդակ և աշխատավարձ» բաժնից:

142001-142003 ծածկագրերով 3 վիճակագրական աշխատանքները վերաբերում են բնակչության դրամական եկամուտներին և ծախսերին: Դրանք իրականացվել են ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 3 աշխատանքների (142001-142003 ծածկագրեր) մասով հաշվարկվել են.

1. ամսական կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտները և ծախսերը

2. եռամսյակային կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

3. տարեկան կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:

142004-142012 ծածկագիրը կրող աշխատանքներն առավելապես նպատակ ունեն ուսումնասիրելու բնակչության եկամուտները (ՀՀ մարզերով և ըստ տնտեսության ճյուղերի ու հատվածների)՝ աշխատանքի վարձատրության, կազմակերպությունների կողմից աշխատուժի պահպանման վրա կատարված ծախսերի տեսանկյունից:

Ընդ որում, տվյալ վիճակագրական աշխատանքների համար վիճակագրական տեղեկություններ հավաքագրվել և մշակվել են 6 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (1 ամսական, 2 եռամսյակային և 3 տարեկան պարբերականությամբ):

1.5. Բիզնես-ռեզիստր⁸

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (150001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետում:

2005թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված վարչական ռեզիստր հանդիսացող պետական կառավարման մարմիններից (ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայությունից) սահմանված կարգով ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ: Վերոհիշյալ մարմիններից ստացված տվյալները ճշգրտվել, համադրվել, ստանդարտացվել և վերլուծվել են բիզնես ռեզիստրի արդիականացման նպատակով:

⁸ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են իրենց վիճակագրական մոնիտորինգում առկա առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բազաները:

2005թ. իրականացվել է 10600 առևտրային իրավաբանական անձանց և 2340 անհատ ձեռնարկատերերի 2004թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը:

1.6. Մասնավորեցում⁹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (160001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ներակայացվող մասնավորեցման արդյունքների վերաբերյալ տեղեկանքները գետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային պարբերականությամբ թողարկումներում:

1.7.Վիճակագրական դասակարգիչներ⁹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 3 վիճակագրական աշխատանքները (170003-170005 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Ի մասնավորի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 21.01.2005թ. թիվ 6-Ն հրամանով հաստատվել և գործողության մեջ է դրվել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակված «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» դասակարգիչը (հրապարակված է ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի 11.03.2005թ. թիվ 5¹ տեղեկագրում): Դասակարգչի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրամիության կողմից առաջադրվող՝ Սի Փի Էյ և ՊՈՌԴԿՈՄ, ինչպես նաև վերջիններիս հիման վրա ԱՊՀ Վիճկոմիտեի կողմից երաշխավորված՝ Արտադրանքի մոդելային վիճակագրական դասակարգիչները:

Աշխատանքներ են իրականացվել նաև «Տնտեսական գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ, որի առնչությամբ դասակարգչի փոփոխությունների և լրացումների նախագիծը համապատասխան գրություններով կարծիքի է ներկայացվել նաև շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին (թվով՝ 15), ինչպես նաև զետեղվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային պաշտոնական էջում՝ այլ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով:

⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Ծրագրից դուրս, նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նաև «Ըստ նպատակների՝ անհատական սպառման» դասակարգչի և դրա պարզաբանումների մշակման ու տեղայնացման ուղղությամբ:

Վերոշարադրյալից բացի, շարունակվել են նաև տնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչների՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) համապատասխանեցվել են նաև դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹⁰

Ծրագրով նախատեսված թվով 6 վիճակագրական աշխատանքները (200001-200003 և 300001-300003 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2005թ. ընթացքում ամսական պարբերականությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և ՀՀ կենտրոնական բանկից հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի, դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից հավաքագրվել են պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից՝ ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցության շրջանակում, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և համախմբված կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ կենտրոնական բանկից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ՀՀ ԱՎԾ կողմից ՏՏՀՍ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում, իսկ դրանց մեթոդաբանական նկարագրությունները (մեթատվյալները)՝ ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային էջում:

ՀՀ կենտրոնական բանկից պարբերաբար ստացվել են նաև արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

Պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների, արտարժույթային

¹⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

փոխարժեքների դինամիկայի, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի գործունեությունը բնութագրող տվյալների հիման վրա հրապարակվել է «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական ժողովածուն (ծածկագիր՝ 3000-101):

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ¹¹

Ծրագրով նախատեսված սույն հատվածի թվով 52 վիճակագրական աշխատանքները (411001-411015, 412001-412020, 420001-420006, 430001-430007, 440001, 450001, 460001, 470001 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (18 ամսական, 18 եռամսյակային, 2 կիսամյակային և 14 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (3-ը՝ միջազգային ծառայությունների առևտրի գծով, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 2-ը՝ բնական գազի ներմուծման և 1-ը՝ զբոսաշրջության):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկանքները:

Կազմվել են.

-2004թ. IV եռամսյակի և տարեկան, 2005թ. I, II և III եռամսյակների Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռները և Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքը և արտաքին ակտիվները, ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտին (SSՀՄ) անդամակցության հետ կապված վերանայվել է վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի և ապրանքների արտաքին առևտրի մեթատվյալները և տեղադրվել է ԱՄՀ-ի ՏՏՀՄ- ի Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում :

Հավաքագրվել են.

-ամսական կտրվածքով՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես՝ բեռնա-մաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծման և արտահանման ծավալների վերաբերյալ,

¹¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

-եռամսյակային կտրվածքով՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ, ապրանքներ ձեռքբերված տրանսպորտային կայաններում, ֆինանսական և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

Համաձայն ՀՀ ԱՎԾ և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, յուրաքանչյուր եռամսյակ Եվրոստատին ներկայացվել են արտաքին առևտրի տվյալները 8-նիշ կտրվածքով, համապատասխան մակետով, իսկ 2004թ. տարեկան տվյալները նույնպես 8-նիշ կտրվածքով ներկայացվել են նաև Միավորված Ազգերի Կազմակերպության վիճակագրական բաժին: Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի տվյալները եռամսյակային կտրվածքով ICS համակարգի միջոցով տեղադրվել է ԱՄՀ ինտերնետային էջում:

5.ՍՈՑԻԱԼ–ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹²

5.1.Ժողովրդագրություն¹²

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 19 վիճակագրական աշխատանքների (511001-511008, 512001-512006 և 513001-513005 ծածկագրեր) կատարումն ապահովվել է ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Շարունակվել են բնակչության բնական շարժի, միգրացիայի, սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման աշխատանքները:

2004թ. հունվարի 1-ից հանրապետությունում հիվանդությունների և մահացության միջազգային՝ ՀՄԴ-10 վերանայման դասակարգման անցումով պայմանավորված, աշխատանքներ են տարվել «Բնակչության բնական շարժի –EDN» կոմպլեքսով ստացվող ելքային աղյուսակների ստացման կառուցվածքում համապատասխան անցումների ապահովման և դրանով պայմանավորված տեղեկագրի ճշգրտման համար:

2005թ. հունվարի 1-ի դրությամբ անց է կացվել հանրապետության գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվառում: Հաշվառման արդյունքներով Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվություններ են ստացվել բոլոր գյուղական (870) համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, առկա և մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների կողմից

¹² Տես՝ Ծրագիր, Հավելված I:

ներկայացվել են նաև բոլոր գյուղական բնակավայրերի հիմնական ցուցանիշները բնութագրող ամփոփ տեղեկագրեր՝ տարածաշրջանային կտրվածքով:

Ձև թիվ 9-Մ վիճակագրական հաշվետվության մեքենայական մշակման արդյունքում ստացվել են՝ գյուղական առկա և մշտական բնակչության թվաքանակի, սեռա-տարիքային կազմի, տնային տնտեսությունների թվի և հանրապետության մարզերի և տարածաշրջանների բաշխումը բնութագրող ելքային աղյուսակներ:

Գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է հանրապետության գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի և բնակչության թվաքանակի, որը համաձայն «Հայաստանի Հանրապետության 2006թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի 03.12.2004թ. թիվ 790-Ն որոշման, ներկայացվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Ամսական պարբերականությամբ ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ հանրապետության մարզերի և տարածաշրջանների բաշխումով, որոնց հիման վրա ստացվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները: 2004թ.-ի 12 ամիսների ընթացքում, ինչպես նաև 2005թ. հունվար ամսին ստացված, սակայն ծննդյան կամ մահվան փաստացի ժամկետով 2004թ-ին տեղի ունեցած ակտերի մշակման արդյունքում ամփոփվել են 2004թ. բնական շարժի վերաբերյալ վերջնական տարեկան վիճակագրական ցուցանիշները, իսկ բազային տվյալների մեքենայական մշակման արդյունքում ստացվել են ելքային ցուցանիշները (22 ելքային աղյուսակներ):

ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված ձև թիվ 19՝ «Եկողի հասցեաթերթիկ»-ների և ձև թիվ 20՝ «Մեկնողի հասցեաթերթիկ»-ների մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային տվյալներ, որոնց հիման վրա կազմվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները: 2004թ.-ի 12 ամիսների ընթացքում ստացված եկող/մեկնողի հասցեաթերթիկների մշակման արդյունքում 2005թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են մեքենայական բազային ցուցանիշների խմբագրման և վերջնական ելքային ցուցանիշների ստացման աշխատանքները (12 ելքային աղյուսակներ):

Բնակչության բնական շարժը ներառող ցուցանիշների և միգրացիոն տեղաշարժերը բնութագրող ցուցանիշների հիման վրա տարեկան և եռամսյակային պարբերականությամբ արդիականացվել են ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով վարվող հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները և թողարկվել են «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը» վիճակագրական տեղեկագրերը (01.01.05թ., 01.04.05թ., 01.07.05թ. և 01.10.05թ. դրությամբ):

ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով իրականացվել է 2002-2004 թվականների համար մարզերի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկ՝ հաջորդող տարիների տարեսկզբի դրությամբ, քաղաքային և գյուղական կտրվածքով:

Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի Հանրապետության անդամության շրջանակում՝ ապրիլի 29-ին՝ 2005թ. հունվար-մարտ, հուլիսի 29-ին՝ 2005թ. ապրիլ-հունիս և հոկտեմբերի 31-ին՝ 2005թ. հուլիս-սեպտեմբեր ամիսների «Բնակչություն» ենթաբաժնի համար պահանջվող տեղեկատվությունը հաշվարկվել և ներմուծվել է ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռա-տարիքային կազմի, ծնելիության, մահացության, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության մասին (երկմաս), ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի, եկողների և մեկնողների սեռա-տարիքային կազմի, կրթական մակարդակի, միգրացիայի ուղղությունների վերաբերյալ (երկմաս), տրամադրվել է նաև ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով տեղեկատվություն՝ (եռամաս), ըստ իրենց կողմից ներկայացված հարցաթերթերի:

5.2.-5.7.Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն)¹³

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 102 վիճակագրական աշխատանքները (520001-520034, 520039-520043, 530001-530007, 540001-540010, 550001-550009, 550011, 560001-560024, 570001-570013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված այս ենթահատվածի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 106 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» և «Ամսվա ընթացքում դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին» ամսական տեղեկանքներով, «Հայաստանի Հանրապետության տարածքի կլիմայական պայմանների և մակերևութային ջրային օբյեկտների վիճակի գնահատում» եռամսյակային տեղեկանքով և «Մակերևութային ջրերի քանակի և որակի մասին» տարեկան տեղեկագրով, ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրով, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հանցագործություններ» տարեկան տեղեկագրով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի վերլուծություն» եռամսյակային ամփոփագրով:

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 69 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 5-ը՝ կիսամսյակային, 56-ը՝ տարեկան պարբերականությամբ:

¹³ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամսյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 13 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 12-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են այդ ոլորտին առնչվող բոլոր վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել են առավել ցուցանիշների կազմում:

Վարչական ռեգիստրների ներդրման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- կրթության ոլորտի վարչական վիճակագրության վարման աշխատանքներն աշխատանքային քննարկումների փուլում են,
- ավարտվել են աշխատանքները ՀՀ առողջապահության նախարարության հետ համապատասխան պետական վիճակագրական ամփոփ հաշվետվային ձևերի մշակման համար,
- շարունակվել են ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի համակարգում վարչական ռեգիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման աշխատանքները,
- շարունակվել է գործնական օժանդակությունը ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում վարչական վիճակագրական ռեգիստրի ամբողջական ձևավորման գործընթացին:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների կատարելագործման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության, բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվում սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները: Մշակվել և փորձնական ներդրման փուլում են բնապահպանության համակարգում ֆինանսական ներդրումների և ծախսերի ընդհանրացված հաշվառման ձևերը:

5.8. Տնային տնտեսությունների հետազոտություններ¹⁴

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով թվով 13 վիճակագրական աշխատանքները (580001-580013 ծածկագրեր) ամբողջությամբ կատարվել են:

Համաշխարհային բանկի տեխնիկական օժանդակությամբ իրականացվող «Աղքատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակում, համաձայն պետական վիճակագրական աշխատանքների Ծրագրի, 2005թ. հունվարի 1-ից մարտի 31-ն անց է կացվել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտություն, իսկ 2005թ. ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ը այն շարունակվել է պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Մարզային կտրվածքով ներկայացուցչական տվյալներ ստանալու նպատակով տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար կազմել է 5187 տնային տնտեսություն: Առաջին եռամսյակում յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 568 տնային տնտեսություն, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում՝ 387: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքագրված տվյալների ամփոփումը եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքների սպառման և այլ ցուցանիշներով կատարվել է եռամսյակային կտրվածքով: Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները զետեղվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» եռամսյակային տեղեկագրի մեջ:

Բոլոր տնային տնտեսություններում միաժամանակ անց է կացվել հետազոտություն Տնային տնտեսության անդամի առողջության վերաբերյալ (Ի ԲՅՈՒ ՖԱՅՖ ԴԻ) հարցաթերթի միջոցով:

Հրապարակվել է և տարածվել «Հայաստանում Ժամանակի օգտագործման փորձնական ընտրանքային հետազոտության (2004թ. հուլիսի 1-31-ը) արդյունքները» զեկույցը՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

2005թ. իրականացվել է հետազոտություն Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի վերաբերյալ:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա տեղեկատվություն է պատրաստվել տարբեր վիճակագրական ժողովածուների համար:

Իրականացվել են 2004թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մաքրման և կազմավորման աշխատանքները: Ձևավորված բազայի անվանազերծված տարբերակը հետագա վերլուծության համար տրամադրվել է Համաշխարհային բանկին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2005թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերանայվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը:

¹⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Պատրաստվել է՝

- վիճակագրական զեկույց «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2004թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա՝ հին մեթոդաբանությամբ, որը տրամադրվել է ՀՀ կառավարությանը:
- աղյուսակներ, Համաշխարհային Բանկի հետ համատեղ 2004թ. հետազոտության տվյալների հիման վրա, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական զեկույցի համար՝ նոր մեթոդաբանությամբ:

Եռամսյակը մեկ ՀՀ կառավարությանը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկը՝ միջին փաստացի գներով (երկու տարբերակով):

5.9. Պարենային ապահովություն¹⁵

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների (590001 և 590002 ծածկագրեր) կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական ոլորտի, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները, կազմվել են 2004թ. առանձին ապրանքախմբերի և ազգային պարենային հաշվեկշիռները:

Իրականացվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ստեղծված պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի համար տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման և վերոհիշյալ կազմակերպության www.fsdatabase.org ինտերնետային էջում տեղադրման աշխատանքները:

Եվրոպական համայնքների հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված ֆինանսավորման մասին համաձայնագրի (09.08.2005թ) շրջանակում իրականացվել են պարենային ապահովության տեղեկատվական համակարգի վերանայման աշխատանքներ՝ միջնաժամկետ ծախսային ծրագրում առկա Պարենային ապահովության ծրագրին առնչվող մոնիտորինգի ձևավորման և հետագա կատարելագործման նպատակով:

Մասնակցություն ունենալով հանրապետությունում բերքի կանխատեսման մշտապես գործող աշխատանքային խմբի աշխատանքներին՝ համաձայն սահմանված կարգի և ժամկետի, խմբին է ներկայացվել պարենային ապահովության ոլորտի տեղեկատվություն:

¹⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I: